«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1132-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

‘ ’ ---------- 2024 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 1132-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելված 1-ում՝

ա. 7-րդ կետի 4-րդ ենթակետում «ժամկետների վերաբերյալ ծանուցումը»

բառերը փոխարինել «վերաբերյալ ծանուցումը՝ օրենքի և սույն կարգի պահանջների համաձայն» բառերով.

բ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած), ներառյալ օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված կամ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած իգական սեռի կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված և շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային համապատասխան ծառայության զորակոչվելու դիմում ներկայացրած (այսուհետ՝ զորակոչի ենթակա) քաղաքացուն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եղանակով և 6-րդ մասով սահմանված կարգով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին՝ համաձայն N 2 ձևի:».

գ. ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետը.

դ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և զորակոչի ենթակա քաղաքացիներին օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված առաջնային ծանուցման անհնարինության դեպքում հանրապետական զինվորական կոմիսարիատի կողմից համապատասխան դիվանագիտական մարմին կամ հյուպատոսական հիմնարկ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է տվյալ դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և զորակոչի ենթակա քաղաքացիների անվանացուցակն ու յուրաքանչյուր քաղաքացու անունով լրացված N 2 ձևի ծանուցագիրը՝ դիվանագիտական մարմնի կամ հյուպատոսական հիմնարկի կողմից ծանուցագիրը քաղաքացուն առձեռն հանձնելու նպատակով: Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմինը կամ հյուպատոսական հիմնարկը ծանուցված քաղաքացիների անվանացուցակը և ստացականները, ինչպես նաև չծանուցված քաղաքացիների անվանացուցակը՝ նշելով չծանուցման պատճառը, և նրանց անունով լրացված ծանուցագրերը մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը և նոյեմբերի 20-ը էլեկտրոնային եղանակով ներկայացնում են հանրապետական զինվորական կոմիսարիատ, որի կողմից չծանուցված քաղաքացիների հրապարակային ծանուցումն իրականացվում է օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասին 4-րդ կետով սահմանված կարգով:».

2) 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված հավելված 2-ում՝

ա. 6-րդ կետի 4-րդ ենթակետում «ժամկետների վերաբերյալ ծանուցումը» բառերը փոխարինել «վերաբերյալ ծանուցումը՝ օրենքի և սույն կարգի պահանջների համաձայն» բառերով.

բ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած) (այսուհետ՝ զորակոչի ենթակա) քաղաքացուն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եղանակով և 6-րդ մասով սահմանված կարգով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին՝ համաձայն N 2 ձևի:».

գ. ուժը կորցրած ճանաչել 8-րդ կետը.

դ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և զորակոչի ենթակա քաղաքացիներին օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված առաջնային ծանուցման անհնարինության դեպքում հանրապետական զինվորական կոմիսարիատի կողմից համապատասխան դիվանագիտական մարմին կամ հյուպատոսական հիմնարկ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է տվյալ դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և զորակոչի ենթակա քաղաքացիների անվանացուցակն ու յուրաքանչյուր քաղաքացու անունով լրացված N 2 ձևի ծանուցագիրը՝ դիվանագիտական մարմնի կամ հյուպատոսական հիմնարկի կողմից ծանուցագիրը քաղաքացուն առձեռն հանձնելու նպատակով: Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմինը կամ հյուպատոսական հիմնարկը ծանուցված քաղաքացիների անվանացուցակը և ստացականները, ինչպես նաև չծանուցված քաղաքացիների անվանացուցակը՝ նշելով չծանուցման պատճառը, և նրանց անունով լրացված ծանուցագրերը մինչև տվյալ տարվա նոյեմբերի 20-ը էլեկտրոնային եղանակով ներկայացնում են հանրապետական զինվորական կոմիսարիատ, որի կողմից չծանուցված քաղաքացիների հրապարակային ծանուցումն իրականացվում է օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասին 4-րդ կետով սահմանված կարգով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն ՓԱՇԻՆՅԱՆ

ք. Երևան 2024թ.